Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

6587
6588
6589

891.99
Ա-83

ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ Թիւ 42

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

Ա. եւ Բ. ՄԱՍ

ԳԻՆ 10 ՂՐՈՒՇ

Հրատարակիչ
Վ. եւ Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ
Կ. ՊՈԼԻՍ
Զամանճըլար Թիւ 24.26
1909



ԵՂԻԱ Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

1834—1881

*Ձայնագրուած Հայկական Երգարան Գ. Պրակ*

3386

ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ — ԹԻՒ 42

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՕԹԱՆԵՐՈՎ ԵՂԱՆԱԿԱՒՈՐՈՒԱԾ

Բ. ՄԱՍ

Հրատարակութիւն Վ. եւ Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ

Կ. ՊՈԼԻՍ
Տպագր. ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
1911

ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

## ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Ա. ՄԱՐԼԵԱՆ



Ո՛չ անիրաւ էին և ո՛չ ալ անմիտ
Անոնք որ զձեզ կը պաշտէին անհրաւէր․
Ձեզի նըման՝ վերբերումով ճըշմարիտ՝
Ուղերձելով իրե՛նց աղերսն ու թեւեր։

Թէ եղեւին ըլլայիք դուք կամ նոճի,
Ձեր շուքին տակ ըզգայնացա՛ծ անտաղոր՝
Կը հըմայէր մարդ թէ խորհուրդ մը կ՚աճի
Թուխ կանանչի փըթթումին մէջ դարաւոր։

Տերեւաշարժ թէ ըլլայիք դուք կաղնին,
Կամ անտառը սօսիներուն այն զառամ,
Մէջ ձեր անուշ սօսաւիւնի ու ձայնին՝
Փուրմը կըրնար կարդալ դարիր մը պատգամ։

Թէ ըլլայիք հովանաւոր դրախտն Հայեաց
Լուռ պուրակին՝ աղբերակին ջինջ ու զով,
Երկըրպագուն ձեր մօտ կու գար անձկայրեաց՝
Բոյն մը երգի՝ բոյր մը խունկի երազով։

Թէ ըլլայիք դուք բարձրաբերձ բարտիներ՝
Արձանացած պաշտամունքու սլա՛ցք անքուն,
Արեւորդին ձեր կողին մէջ կը դիտէր
Խաչ մը խոկում մահուան ձորին վրայ կանգուն։

Թէ ըլլայիք նոյն իսկ ցածուն մորենին՝
Խոր տեսիլքի՛ մը կրակներովն հըրդեհուած,
Ձեր թաւուտքին մօտ՝ ուր բոցեր կ՚արիւնին՝
Պիտի զիրար տեսնէին մարդն ու Աստուած...։

Ո՛չ անիրաւ էին և ո՛չ ամբարիշտ
Անո՛նք որ զձեզ կը պաշտէին, ո՛վ ծառեր,

Ու նուագելու համար իրենց տենչն ու վիշտ՝
Ո՛րքան երբեմն հոգիք ձեր շուրջն են թառեր։

Հիմա սակայն լքուած էք՝ լե՛րկ ու անշուք,
Ցաւի քուրջեր կապուած են ձեր կանանչին,
Ու գրիագներ խուսած՝ ձեր մէջն անշրշուկ
Ալ չեն մրափեր իրենց անուրջքն տաքին...։

Իսկ ես թէ ձեր քուրմն ըլլայի որ մ'եւեթ՝
«Ոսկի տառ»ով կը գրնէի ձեզ պատուատ,
Որ ձեր այն նո՛ր բաղխօջումի գիրկն անհետ
Տերե՛ւ մ'իսկ կեանքն ըլլար պաշտում և իմաստ։

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

## ՍԵՐԵՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ




Վէրքերով մի ջանֆիդայ եմ
Թափառական տուն չունեմ
Եարիս փոխարէն զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ։

Արիւնոտ երկիր, սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.

Տանջուած հայրենիքի սէրը
Զը վախեցուց ինձ վտանգից:

Ես կոչուեցայ ջանֆիդայի,
Դարձայ զինուոր գաղափարի.
Թող իմ թափած արեան շիթեր
Օրինակ դառնայ հայ զինուորի:

Մակեդոնիա իմ եղբայրս
Իմ խաչովս պսակուեց.
Եղբայրական սիրոյն զէնքով
Գազան խուժանն խորտակուեց:

Ահա հանգիստ հող կը մնամ,
Յոյս դուք էք ընկերներ,
Շարունակենք մեր սուրբ գործը
Դաշնակցութեան վեհ քաջեր:

Կախաղանից երբոր քամին
Ինձ տարբերեց ճօճայէն,
Յիշէք Պետրոս Սէրէմճեանին,
Թշնամիէն վրէժ պոռայէն:

# ԳԱՐՈՒՆ

Տ. ՉՕՒԽԱՋԵԱՆ




*Ո՛հ, ի՛նչ անուշ և ի՛նչպէս զով,*
*Սառաւօտուց փրչես հովիկ,*
*Ծաղկանց վրրայ գուրգուրալով,*
*Եւ մազերուն կուսին փափկիկ.*
*Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,*
*Գընա՛ անցիր սրտէս ի բաց:*

*Ո՛հ, ի՛նչ աղու և սրրտագին,*
*Ծառոց մէջէն երգես Թըռչնիկ,*



Մկրտիչ Պէշիկթաշլեան
(Բանաստեղծ - թատերագիր)

Սիրոյ ժամերն ի յանտառին,
Ըզմայլեցան ի քո ձայնիկ·
Բայց չես թըռչնիկ իմ Հայրենեաց,
Գնա՛ թըռի՛ր սըրտէս ի բաց։

Ո՛հ, ի՛նչ մըմունջ հանես վըտակ,
Ականակիտ և հանդարտիկ·
Քու հայելւոյդ մէջ անապակ,
Նային զիրենք վարդն ու աղջիկ·
Բայց չես վըտակ իմ Հայրենեաց,
Գնա՛, հոսէ՛ սըրտէս ի բաց։

Թէպէտ թըռչնիկ և հաւն Հայոց ,
Աւերակաց թըռչին վերայ ,
Թէպէտ պըղտոր վըտակն Հայոց
Նաճիններու մէջ կը սողայ ․
Նոքա՝ հառաչք են Հայրենեաց ,
Նոքա չերթա՛ն սըրտէս ի բաց ։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

# ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ



Ազատ Աստուածն այն օրից ,
Երբ հաճեցաւ շունչ փչել ,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգևել ։

Ես անբարբառ մի մանուկ ,
Երկու ձեռքս պարզեցի ,
Եւ իմ անզօր թևերով ,
Ազատութիւնն գրկեցի ։

Մինչ գիշերը անհանգիստ ,
Օրօրոցում կապկապած

*Լալիս էի անդադար,*
*Մօրս քունը խանգարած.*

*Խնդրում էի նրանից,*
*Բազուկներս արձակել.*
*Ես այն օրից ուխտեցի,*
*Ազատութիւնը սիրել:*

*Թոթով լեզուիս մինչ կապերը,*
*Արձակուեցան բացուեցան.*
*Մինչ ծնողքըս իմ ձայնից*
*Խնդացին ու բերկրեցան:*

*Նախկին խօսքն որ ասացի,*
*Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ,*
*Ազատութի՛ւն դուրս թռաւ,*
*Իմ մանկական բերանից:*

*«Ազատութի՞ւն», ինձ կրկնեց,*
*Ճակատագիրը վերեւից.*
*«Ազատութեա՛ն դու զինուոր*
*Կամի՞ս գրուիլ այս օրից:*

*«Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,*
*Քեզ շատ փորձանք կը սպասէ.*
*Ազատութիւն սիրողին,*
*Այս աշխարհը խիստ նեղ է»:*

*— Ազատութի՛ւն, — գոչեցի,*
*Թող որոտայ իմ գլխին.*
*Փայլակ, կայծակ, հուր երկաթ,*
*Թող դաւ դընէ թշնամին:*

*Ես մինչ ի մահ, կախաղան,*
*Մինչեւ անարգ մահու սիւն,*
*Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ,*
*Անդադար. ԱԶԱՏՈՒԹԻ՛ՒՆ:*

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

# ՔԱՅԼԵՐԳ ԶԷՅԹՈՒՆՑԻՈՑ




*Զէյթունցի ենք, մենք քաջ ունինք*
*Թըշնամիէն վըրէժ ունինք,*
*Սուր թուր գընդակ եւ հրացան*
*Մեր խաղալիքն է յաւիտեան :*
*Բաւ է եղբայր որչափ կրեցինք գերութիւն*
*Քիչ մ՚ալ եղենք ցոյց տանք նրանց դառնութիւն :*

*Արեւ ծագեց Զէյթունցիներ*
*Դէ՛հ, ձի հեծնենք զէնքերն առնենք դիմենք յառաջ,*
*Ինչու խեղճուկ գլուխ ծռած,*
*Բռնաւորին մեր վիզ պարզած :*
*Բաւ է եղբայր են. :*

*Ապրի Զէյթուն, կեցցէ Զէյթուն*
*Թող չի տեսնէ ստրկութիւն,*
*Քանի ունի մեզի պէս որդի*
*Ապրի Զէյթուն, կեցցէ Զէյթուն :*
*Բաւ է եղբայր են. :*

# ԵՐԱԶ




Ես լսեցի մի անուշ ձայն, —
Իմ ծերացած մօր մօտ էր,
Փայլեց ն՚շոյլ ուրախութեան,
Բայց ափսո՜ս որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւր այն տեղ,
Թաւալում էր մարգարիտ.
Նա յատակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տխուր, մայրենի,
Յիշեց մանկութեան օրեր. —
Մօրս համբոյրն ես զգացի, —
Ա՜խ, ափսո՜ս որ երազ էր։

Կրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց շատ թաց էր,
Բայց արտասուք գնում էին,
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

## ՁԱՅՆ ՏՈՒՐ Ո՛Վ ՓԷՏԱ




Ձայն տուր, ո՛վ Փէտա ինչո՞ւ ես տրտում,
Լուռ ու մունջ նստած երկար մտածում,
Աւա՛ղ երկար մտածում,
Տխուր երկար մտածում:

Շարժեցէ՛ք տղերք սրեր չողչողուն,
Թափեցէ՛ք կրակ թշնամեաց գլխուն,
Գազան թշնամեաց գլխուն,
Դաժան թշնամեաց գլխուն:

Թափե՛նք մեր արիւն իբրեւ ախոյեան,
Լինի առաջնորդ մեր ազատութեան
Սիրուն մեր ազատութեան,
Անուշ մեր ազատութեան:

Շտապեցէ՛ք, ընկերք, խմբուիլ միատեղ,
Մետաքսէ դրօշակ ծածանի այնտեղ
Թող միշտ ծածանի այնտեղ
Սիրուն ծածանի այնտեղ.

Պարզեցէ՛ք դրօշակ վեհ Դաշնակցութեան
Լինի առաջնորդ մեր ազատութեան
Սիրուն մեր ազատութեան.
Սիրուն մեր ազատութեան:

Բանի այսպէս է հայ խղճալի․
Ջնջուած պիտի լինի ամբողջ Փէտայի․
Սիրուն ամբողջ Փէտայի․
Կտրիճ ամբողջ Փէտայի։

Մօսին հրացան ձեռքերնիս բռնած,
Թունաւոր փամփուշտ կուրծքերնիս շարած,
Հայդա կուրծքերնիս շարած,
Սիրուն կուրծքերնիս շարած

## ԱՆՑՈՐԴԻՆ

Կ. ՄՍՐԼԵԱՆ




Անցո՛րդ, սա գետին Ջուրէն մի՛ խմեր,
Հոն է խղդըւած կտրիճը գիւղին,



Անտոն Մայլեան (Երգահան-Ջութակահար)

Գուցէ ջուրն այդ զով, շրթունքներդ ջեր
Զովացնելու տեղ կ՚այրէ անդադին:

Որչափ որ ուսին՝ յորդավազ գետին
Վըրայ արտասուեց ամէն օր անձայն,
Որչափ որ մայր մը կորուսեալ զաւկին
Համար փղձկեցաւ այդտեղ ողբաձայն,

Դարձեալ այսքանն ալ չի կրցաւ երբեք
Մոռցընել սուգերն այս դաշտավայրին,

*Անցո՛րդ, թող սուր այդ ջուրին ահարեկ*
*Որ ժայռերու տեղ փշրի՛ ողբագին ։*

*Ես իմ սափորըս այնտեղ կորսնցի*
*Որ այրող ջուրէն չըլլայ թէ առնեմ ,*
*Եւ հիմա խմին քայլերս առնացի*
*Կ'ուղղեմ աղբիւրին ճամբան դալկադէմ . . . ։*

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

## ԱՆԴՐԱՆԻԿԻՆ




*Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ .*
*Թնդացնում ես երկինք–գետին տենչավառ .*
*Սուրբ անունդ պիտի յիշուի դարէ դար ,*
*Հսկայ լերինք քեզ ապաստան Անդրանիկ ։*

*Թշնամիներդ երբ լսեն քո անունը ,*
*Օձերի պէս պիտի սողան իրանց բոյնը .*
*Երակներիդ ազնիւ քաջի արիւնը*
*Չը ցամաքէ մինչեւ յաւիտեան Անդրանիկ ։*

*Հայոց կուսանք, դաժնեայ պսակ թող հիւսեն,*
*Փնջոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն․*
*Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն․*
*Կեցցես յաւէտ դու անսասան Անդրանիկ։*

*Հայաստանի սոխակները քեզ համար,*
*Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար․*
*Անյաղթ մնաս դու քաջ կտրիճ սիրահար,*
*Հայրենիքի տէր ու պաշտպան Անդրանիկ։*



ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ
(ԳՐԱԳԷՏ-ԲԱՆԱՍՏԵՂԾ)

# ԿՈՅՐ ՊԱՊՈՒԿԸ

## ( ՍԻՐՈՅ ԹԱԽԾԵՐԳ )

Ո՛հ եթէ ճուագահան
ըլլայի եւ սիրոյ երգերս
եղանակէ՛ի



Քրտինքս սրբող միայն հերաց
Համար ճակատըս թափեց քիրտ·
Բուրումն անոյշ այն սուրբ քրտանց
Մնաց միայն, եղո՜ւկ, յիմ սիրտ·
Խնկեալ թափուր ժամ մ'է իմ սիրտ...

Խօսքերս երգող միայն շրթանց
Համար շրթունքս ունեցան երգ·
Արձագանգը միայն մընաց
Երգոցն յիմ սիրտ իբրեւ ողբերգ·
Նըւաղահաս սիրտս է խոր վէրք։

Արտասուքներս ծըծող շրթանց
Տըւին միայն շրթանցս համբոյր·
Պատկերն աչաց սեւ լոկ մընաց·
Եղո՜ւկ սակայն չը գիտեմ ո՛ւր,
Արտասուքէ աչքս եղան կոյր...

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

# ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՆՔ




*Ի բիւր ձայնից բնութեան շքեղ*
*Թէ երգք թռչին սիրողաբար ,*
*Մատունք կուսին ամենագեղ ,*
*Թէ որ զարնեն փափուկ քընար ,*
*Չունիմ ձայն մի այնքան սիրուն ,*
*Քան զանձկալի եղբայր անուն ։*

*Տուր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մենք*
*Որ մըրըրկաւ էինք զատուած.*
*Բաղդին ամէն ոխ չար ու նենգ*
*Ի մի համբոյր ցըրուին ի բաց։*
*Ընդ աստեղեօք ի՜նչ կայ սիրուն,*
*Քան զանձկալի եղբայր անուն։*

*Երբ ալեւոր Մայր Հայաստան,*
*Տեսնէ զորդիս իւր քովէ քով.*
*Սըրտի խորունկ վէրքերն դաժան,*
*Քաղցր արտասուաց բուժին ցօղով։*
*Ընդ աստեղեօք ի՜նչ կայ սիրուն,*
*Քան զանձկալի եղբայր անուն։*

*Մէկտեղ լացինք մենք ի հընում...*
*Եկէք, դարձեալ յար անբաժան*
*Խառնենք զարտօսր և զխընդում,*
*Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան։*
*Ընդ աստեղեօք ի՜նչ կայ սիրուն,*
*Քան զանձկալի եղբայր անուն։*

*Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,*
*Մէկտեղ թափին մեր քըրտինքներ.*
*Ըղձունձք բարեաց յերկինս հանենք,*
*Որ կեանք առնուն Հայոց դաշտեր։*
*Ընդ աստեղեօք ի՜նչ կայ սիրուն,*
*Քան զանձկալի եղբայր անուն։*

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

# Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Ս



*Ոչ թռչուններն և ո՛չ հովուն*
*Սիրելս ըղձերգ չը գրուցեցի·*
*«Խօսէ՛» ըսաւ ինձ ծովն անհուն,*
*Ծովուն ալ սիրտըս չը բացի։*

*Ծաղիկներուն չըսի ես քեզ,*
*Աստղերուն ալ չըսի բընաւ·*
*Ջըսի լուսնին թէ այս հրակէզ*
*Սրտիս մէջ սէրդ ի՛նչպէս ծընաւ։*

*Սակայն թռչունն, աստղերն ամէն·*
*Հովն ու ծաղիկ, ծովն ու լուսին,*
*Քեզ ճանչնալուս առջի ժամէն*
*Քու վըրայօքդ ինձ կը խօսին։*

ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ



ԽՈՐԷՆ ՆԱՐ ՊԷՅ

( ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԵՐԳԱՀԱՆ )

# ԶՈՒԼՈՒՄ ԱՇԽԱՐՀ




Սիրեցի եարս տարան
Եարա տունն ու տարան
Էս ինչ զուլում Աշխարհ է
Սիրտս բօլեցին ու տարան։

Ցաւս մենծ է ճար չըկայ
Ճար կայ ճարակ չըկայ
Էս ինչ զուլում Աշխարհ է
Սըրտակից ընկեր չի կայ։

Սարերի վրով գնաց։
Իմ եարը խռով գնաց
Ոչ լոր էր նա ոչ կաքաւ
Ձեռիցս թռաւ գնաց։

Լաւ օրերս անցան գնացին
Սեւ տարտերս մնացին
Աս ինչ զուլում Աշխարհ է
Խոր ցաւերս մնացին։

# ՍՈՒԳ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դաշնաւորեց
Ա. ՄԱՐԼԵԱՆ

Lento



Իմ սիրելի զաւակունքըս ,
Կը թափառին օտար յաշխարհ .
Ես ո՞ւր դիմեմ , ո՞ւր փնտրեմ ,
Կը ծառայեն այլոց խոնարհ ։

Եկա՛յք որդեակըք իմ ,
Ձեր մօրն այցելութեան ։

Դարեր անցան լուր մը չառի ,
Իմ քաջերըս մեռան կորան ,
Կուլամ՝ արիւնս կը սառի . . .
Մէկը չունիմ տայ ինձ դարման ։

Եկա՛յք որդեակըք , ևն . ։

Արիւնս ցամքած , սիրտըս մաշած ,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան .
Եւ կարօտով իմ որդեկաց ,
Պիտի իջնեմ սեւ գերեզման ։

Եկա՛յք որդեակըք , ևն . ։

Եւ դու հովիւ Թափառական ,
Կ'երգես տխուր ի մէջ հովտաց .
Ե՛կ , արտասուենք թանկ կորըստեան . .
Տխուր մահուան մեր որդեկաց ։

Եկա յք որդեակըք , ևն . ։

Իսկ դո՛ւ կռունկ իմ Հայրենեաց ,
Գնա՛ հեռո՛ւ աչքէս ի բաց . . .
Ցեարին ողջոյնս տար զաւակացս ,
Զի կեանքիս մէջ յոյս է մեռած ։

Եկա՛յք որդեակըք , ևն . ։

# ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌՈՒԵՆՔ



Մենք պէտք է կռուենք և ոչ լց լինենքա ,
Ազգի կորուստը զէնքով յետ խլենք ·
Այսքան դար լացինք , ո՞վ է լսողը ,
Մեզ ի՞նչ չա՞ն բերեց արցունքի ծովը ։

Այլևս չլանք և ոչ լաց լինենք ,
Կրակուած սրտով մեր գործը վարենք ·
Անվեհեր քաջին այս է պատկանում ,
Միշտ ազատ մնալ կռուի լայն դաշտում ։

Մոլի և երկչոտ թշնամին թող լայ ·
Երբ հայ քաջի դէմ կռիւ դուրս կուգայ ·
Մենք փախցող չենք մահից տանջանքից ,
Եւ ոչ ալ մահու դաժան գնդակից ։

Անէծք այն հօրն , որ չի մղում որդուն ,
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն ·
Ամօ՜թ այն Հային և բիւր նախատինք ,
Որ ազգի սիրուն չի գործում բարիք ։



ԼԵՒՈՆ ԱՍԱՏՈՒՐ
(ԵՐԳԱՀԱՆ-ԴԱՇՆԱԿԱՀԱՐ)

# ՃԱԽԱՐԱԿ




*Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,*
*Մանիր սիպտակ մալանչներ*
*Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,*
*Որ ես հոգամ իմ գաւեր։*

*Ջէթ եմ ածել ականջներըդ*
*Նոր չինել եմ չրուլիկ,*
*Դէհ, շուտ շարժիր լայն թեւերըդ*
*Ոտեր չինիր սըրուլիկ։*

*Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,*
*Լիսեռնիկըդ պըտտիր,*
*Մանի՛ր թելեր հարա ու բարակ,*
*Իլիկդ վըրայ փաթաթիր։*

*Տիգրանիկըս գուլպայ չունի,*
*Հանդ է գնում ոտաբաց,*
*Գարբիչըս չուխա չունի,*
*Միշտ մնում է սուգ ու լաց։*

*Մանի՛ր, մանի՛ր իմ ճախարակ,*
*Մանի՛ր սիպտակ փաթիլներ,*
*Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,*
*Որ ես հոգամ իմ գաւեր։*

*Ջրաղ չունինք, չաթու չունինք,*
*Ոչ՝ սամոտէն, ոչ սպրան.*

Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
Կորսուել է ամէն բան։

Դեռ հարս էի որ գործեցի
Քանի կարպետ խալիչա,
Բայց դըրամներից շուտ զըրկուեցի,
Հիմա չունիմ մի քեչա։

Կարմիր օրըս երբ սեւացաւ
Եւ պարտք մընաց թէեւ քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սեւցաւ.
Եկաւ տարաւ ամէն ինչ։

Մանի՛ր, մանիր իմ ճախարակ,
Մանի՛ր սիպտակ քուլաներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Դ. ԱՂԱՅԵԱՆՑ



**Ր Ա Ֆ Ֆ Ի**

ՎԻՊԱԳԻՐ - ԳՐԱԳԷՏ

# ԵՐԳ

Adagio

Ա. ՄՍՐԼԵԱՆ Op. 21



Քո՛յր մտեցի՛ր կըրակին ,
Ծըխէ՛ տեսնե՛ն այս բուրեան ,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը դարձընէ հոտն արեան :

Քո՛յր , մտեցի՛ր դարակին
Ու բե՛ր հեղուկն հընծանեան ,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը դարձընէ համն արեան :

Քո՛յր , մտեցի՛ր ճըրագին ,
Մարէ՛ զայն , թո՛ղ լուսինկան ,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը դարձընէ գոյնն արեան ,

Քո՛յր մտեցիր նըւագին ,
Երգէ՛ դաշտերն ու ցորեան ,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը դարձընէ ձայնն արեան :

Քո՛յր , մտեցո՛ւր իմ ձեռքին
Աստուածարոցն հըրայան ,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը յիշեցընէ վրէժն արեան . . . :

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ



ՊԱՊԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (Եռամիշ)

# ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ ՍԱՐԻ ՍՄԲՈՒԼ




*Դարդս լացէ՛ք, սարի սմբուլ,*
*Ալւա՛ն-ալւա՛ն ծաղիկներ.*
*Դարդս լացէք բաղի բլբուլ*
*Ամպշող երկնից գոլ-հովեր,*

*Երկինք-գետինք գլխուս մթնած,*
*Անտուն, անտէր կուլամ ես.*
*Եարիս տարան, ջանիս տարան*
*Հոնգուր հոնգուր կուլամ ես:*

*Ա՛խ, եարս ինձ հանեց սրտէն,*
*Անճար թողեց ու գնա՛ց...*
*Սրտիս սուգէն-խորունկ եարէն*
*Անտեղ թողեց ու գնաց:*

*Դարդս լացէ՛ք, եւ. եւ.:*

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ՑԵՂԻՆ ՅՈՒՌՈՒԹՔԸ

Ա. ՄՍՐԼԵԱՆ
Op. 24

introduction
Andante



Քընարս գինիին մէջը թաթխեցի ,
Ու երբ ըսկսայ նըւագել ես զայն ,
Այգիէն խումբ խումբ այրիներ անցան ։

Քընարս աղբիւրին մէջը թաթխեցի ,
Եւ երբ թրջըւած նըւագեցի զայն ,
Սափորով արցունք առնելու եկան ։

Քընարս արիւնին մէջը թաթխեցի ,
Երբ զոհի ձայնով նըւագեցի զայն ,
Մանուկներ եկան սուրերու նըման ։

Քընարիս՝ գայլէն աղիք մը տըւի ,
Եւ երբ ըսկսայ նըւագել ես զայն ,
Եօթ լեռնէն անդին ոչխարներ փախա՜ն ։

Քընարս մոխիրին մէջը թաթխեցի ,
Երբ ճարճատման պէս նըւագեցի զայն ։
Այդ օր գիւղիս մէջ հըրդեհներ ինկան ։

Քընարս բոցերուն մէջը վառեցի ,
Հոգիիս խորը հըրթիռներ ինկան .
Սառնցմով կ'ուզեմ այրե՛լ ամէն բան ... ։

ԼԵՒՈՆ ԽՍԱՃԱՆԵԱՆ

# ԵՐԳԵՐ ՈՒ ՎԷՐՔԵՐ




*Օտա՛ր ամայի ճամբէքի վըրայ*
*Իմ կարաւանըս մեղմ կը ղօղանջէ .*
*Կանգնի՛ր , կարաւա՛ն , ինծի կը թուայ ,*
*Թէ՝ հայրենիքէս ինծ մարդ կը կանչէ ։*

*Բայց լո՛ւռ է չուրջըս ու շըշուկ չը կայ*
*Աւեւա՛ռ, անդո՛րր այս անապատում.*
*Ա՜խ, հայրենիքըս ինձ խորթ է հիմա,*
*Ու քնքուշ սէրըս ուրիշի գրկում:*

*Գընա՛, քարաւանս, ինձ հետըդ քա՛շ տար*
*Օտա՛ր, ամայի ճամբէքի վըրայ.*
*Ուրտեղ կը յոգնիս, գլուխըս դի՛ր վար —*
*Ժէռ-քարերի մէջ, փըշերի վըրայ...:*

**Ար. ԻՍԱՀԱԿԵԱՆ**

---

## ՀԱՅԿԱԿՆԵՐՈՒՆ ՈՐՈՐԱՆԸ

Larghetto — Յ. ՄԻՆԱՍԵԱՆ




*Շինուած է ան նոճիով*
*Եւ արիւնով ներկըւած.*
*Կ'երգեն բուերն իրեն քով.*
*Կ'օրրէ մըրրիկը կատղած:*

*Կամարէն վար կը կախուին*
*Կապոյտ կապոյտ ուլունքներ.—*
*Արցունքներն են երկընքին՝*
*Ինկեր ցուրտէն հոն սառեր:*

Խոնաւութեան մէջ, մութին,
Որով խորշիլն է լեցուն,
Որով կը ճօճի օրոցքն հին,
Հին վրէժին պէս իմ հողույն:

Անդունդ մ՚է ան՝ ուր Հայն իր
Վիշապներն հետ կը ծընի,
Ուր համբոյրներն, վարդերն հեր
Կը բուրեն հոսն արիւնի:

Ոչ մէկ գիրգ ծոց ծննդական
Հոն կը բանայ իր երկինք.
Խաւարներն հոն մայր կ՚ըլլան,
Եւ կայծակներն ալ՝ չարինք:

Ու ճիչերու մէջ. լացի,
Տըժգոյն տըղան կը մեռնայ
Բարեկամի, դիպուածի
Ձեռքերուն մէջ կը մեծնայ:

Եւ գուցէ վաղն ան ըլլայ
Ռազմիկ մ՚հրաչեայ, չանթող ամպ.
— Մեզ մայրն Յիսուս մը կու տայ՝
Իսկ հայ օրոցքն՝ Սպարտակ...



ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ

**ԵՐԱԺԻՇՏ-ՋՈՒԹԱԿԱՀԱՐ**

# ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

*Հայ երգն ու երաժշտութիւնը Վ. և Պ. Զարդարեան եղբարք* 3
*Երգ Ազգ. Սահմանադրութեան* (Արի՛ք Հայկազունք) *Յ. Գ. Սվաճեան* 7
*Անդրանիկի քայլերգ* (Դաշնակցական խումբ) 9
*Առ Հնչակ* (Հեռաւոր երկիր) *Մ. Տամատեան* 10
*Ի դիմաւորութիւն Ամեն. Հայրիկին* (Ո՞վ է որ գայ) *Պ. Դուրեան, Եղանակ Բ. Կանաչեան* 11
*Խանասորի քայլերգը* (Կռուեցէք տղերք) *Մ. Ե.* 13
*Սիրերգ* (Ահա եկաւ Լուսին) *Շանթ* 14
*Վերջաբան* (Լռեց ամպերը) *Գամառ-Քաթիպա* 15
*Տալւորիկ* (Տալւորիկի զաւակ եմ) *Մ. Տամատեան* 16
*Կենսագրական նօթեր Մ. Նալբանդեանց պատկերով* 19
*Իտալացի աղջկայ երգ* (Մեր Հայրենիք) *Մ. Նալբանդեանց* 21
*Ազատութեան հրաւէր* (Ի զէն Հայեր) 24
*Ձայն տուր* (Ձայն տուր ով ծովակ) *Րաֆֆի* 25
*Երգ պանդուխտ պատանեկի* (Ծիծեռնակ) *Գ. Ա. Դոդոխեանց* 26
*Խանասորայ արշաւանքին առթիւ* (Կարկուտ տեղաց) 28
*Սասնոյ կռուարած* (Սասուն եկաւ ապստամբեց) 29
*Այրիին որդը* (Արշալոյսը ձորէն բացուաւ) 31
*Սիրահարին նաւակը* (Լճի մէջ նաւակը) *Գամառ-Քաթիպայ* 32
*Երգ նահատակաց յիշատակին* (Ազատութեան սիրոյն) *Եղանակ Յ. Մինասեանի* 35
*Խանի երգը* (Լուսին չկար) *պատկերով* 36
*Յոյս* (Ահա կ'երթամ սիրելի մայր) 38
*Կենսագրական նօթեր Եղիա Մ. Տնտեսեան, պատկերով* 40
*Գիւղական աղջիկ* (Գիւղական աղջիկ եմ) *Մ. Թաղեատեանց, Եղանակ Տնտեսեանի* 42
*Հրաւէր* (Տեսէք աղաւնին) 43
*Գողթնի քնար* (Թէ հայրենեաց պսակադիր) *Գ. Վ. Սրուանձտեանց* 45

Երգ ուրախութեան (Ահա բաժակ) Ս. Գ. Փափազեան
եղանակ Տ. Չուխաճեան 47
Մեր Հայրենիքի սիրուն 49
Երգ շղթայակապ Հայոց (Ի զուր են ի զուր) Խ. եպ. Նարպէյ 51
Խաւարել եմ ինչպէս գիշեր 52
Վանեցի մօր երգը (պըզտի տըղայ չեմ օրօրեր) Գամառ-Քա-
թիպա 53
Գէորգ Չաւուշի երգը (Թուրքը լաւ, Եղիկ. Բ. Կանայեան 54
Քաջ Անդրանիկին (Դարձեալ փայլեց) 56
Մենք անկեղծ զինուոր ենք 57
Ի զէն (Ազատութեան այն վառ սէրը 58
Խրատ (Երբոր Ազգին ձայնը) 59
Հայրենի ձայն (Եկել է գարուն) 60
Կենսագրական նօթեր Խրիմեան Հայրիկ պատկերով
Ա. Արփօյաճեան 62
Շարժում հայրենեաց (Ձայնը հնչեց Էրզրումի) 69
Հառաչանք Սարգիս Ջան Կուկունեանի պատկերով (Երբ
ալեկոծ) 71
Երգ մեռանող հայրենասէրի (Սգնիւ ընկեր) Ա. Շահազիզեանց 73
Օրօր (Արի՛ իմ սոխակ) Գամառ-Քաթիպա 74
Սասուն (Սասուն գաւառ հին) 75
Նախանձ (Երբ կը տեսնեմ) Մինաս Չերազ պատկերով
Եղանակ Գ. Փ. Գրիգոր 78
Որբերգ (Դրժնեաց գիշերն) Պետրոս Դուրեան պատկերով
Եղանակ Ս. Մերըլեան 79

## Բ. ՄԱՍ

*Անտառին մէջ (Ոչ անիրաւ էին) Ն. Եպ. Դուրեան
Եղանակ Ս. Մերըլեանի 83
Սերենձեանի յիշատակին (Վերքերով լի) 85
Գարուն (Ո՜հ ինչ անուշ) Մ. Պէշիքթաշլեանի պատկերով
Եղանակ Տ. Չուխաճեան 87

*Երգ ազատութեան* (Ազատ Աստուածն) *Մ. Նալբանդեանց* 89
*Թայլերգ Զէյթունցւոց* (Զէյթունցի էնք) 91
*Երազ* (Ես լսեցի մի անուշ) 92
*Զայն տուր ո՛վ Փէտա* 93
**Անցորդին* (Անցորդ սա գետին) *Լ. Խաճանեան եղնկ. Ա. Մսրլեանի պատկերով* 94
*Անդրանիկին* (Իբրեւ արծիւ) 96
**Կայր Պապուկը* (Քրտինքս սրբող) *Ե. Տէմիրճիպաշեան պատկերով, եղանակ Ա. Մսրլեանի* 98
*Եղբայր եմք մենք* (Ի բիւր ձայնից) *Մ. Պէշիկթաշլեան* 100
*Գաղտնիքս* (Ոչ բուչունին) *Կ. Ոսկեան, եղնկ. Յ. Սինանեանի* .02
*Խորէն Նարպէյ բանաստեղծ-երգահան* 104
*Զուլում աշխարհ* (Սիրեցի եարըս տարան) 105
**Սուգ Մայր Հայաստանի* (Իմ սիրելի զաւակունքս) *եղնկ. Ա. Մսրլեանի* 106
*Մենք պէտք է կռուենք* 108
*Լեւոն Սատուր, երգահան-դաշնակահար* 109
*Ծախարակ* (Մանի՛ր մանիր) *Դ. Աղայեանց* 110
*Րաֆֆի վիպագիր-գրագէտ* 112
**Երգ* (Քոյր մօտեցիր) *Միսաք Մեծարենց եղկ. Ա. Մսրլեանի* 113
*Պապա Համբարձում երաժիշտ* 115
*Դարդս լացէք սարի ամբուլ* 117
**Ցեղին յուսութքը* (Քընարս գինիին մէջ) *Լ. Խաճանեան եղանակ Ա. Մսրլեանի* 118
**Երգեր ու վէրքեր* (Օտար ամայի) *Ա. Իսահակեան եղնկ. Ա. Մսրլեանի* 120
*Հայկակներուն որորանը* (Շինուած է ան նոնիով) *Դ. Վարուժան, եղանակ Յ. Սինանեանի* 122
*Բարսեղ Կանաչեան, երաժիշտ ջութակահար* 125

---

**Ծանօթ.** — Աստղանիշուած երգերն դաշնակի եւ երգէհոնի համար պատրաստուած են :